ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ..(+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» ապրիլի 2014 թվականի N 50 -Ա

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՅՐԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԳՅՈՒՄՐԻԻ ՈՒՍՈՒՄՆԱ-ԱՐՏԱԴՐԱԿԱՆ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂՈՒԿԱՍՅԱՆ 98 ԵՎ ՄԱՅԱԿՈՎՍԿՈՒ 144 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրու քաղաքապետին է դիմել <<Հայաստանի Կույրերի Միավորման Գյումրիի ուսումնա-արտադրական>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ (գրանցման համարը՝ 29 040 001 007, գրանցված՝ 1994 թվականի դեկտեմբերի 29-ին, ՀՎՀՀ-05500161) սեփականության իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի Ղուկասյան 98 և Մայակովսկու 144 հասցեներում գտնվող շենքերի և շինությունների 2014 թվականի գույքահարկի և հողի հարկի գումարների վճարման նկատմամբ արտոնություններ սահմանելու խնդրանքով (դիմումը՝ մուտքագրված Գյումրու քաղաքապետարանում 2014 թվականի մարտի 12-ի ՈԴ/1606 թվագրմամբ):

Համաձայն <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի, <<Հողի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի <<Համայնքի ավագանու կողմից գույքահարկի և հողի հարկի արտոնություններ սահմանելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 1998 թվականի մայիսի 19-ի N 300 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 822-ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետի՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Սահմանել արտոնություն <Հայաստանի Կույրերի Միավորման Գյումրիի ուսումնա-արտադրական>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ղուկասյան 98 և Մայակովսկու 144 հասցեներում գտնվող շենքերի և շինությունների 2014 թվականի գույքահարկի և հողի հարկի գումարների վճարման նկատմամբ, ազատելով համապատասխանաբար՝ 176000 (մեկ հարյուր յոթանասունվեց հազար) դրամ և 18746 (տասնութ հազար յոթ հարյուր քառասունվեց) դրամ, ընդամենը 194746 (մեկ հարյուր ինսունչորս հազար յոթ հարյուր քառասունվեց) դրամ գումարի վճարումից:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (15)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(1)**
Ա. Ադամյան _____		Լ.Բարսեղյան _____
Ա.Բաղրամյան _____		